«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ» բհկ-ի 2020 թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2020 թվականին կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ստացել 24.773.884 դրամի չափով:

Իրավաբանական անձիք՝ 15.482.940 դր.

Ֆիզիկական անձիք՝ 9.290.944 դր.

Ծախս.

Աշխատավարձ՝ ներառյալ հարկեր - 3.344.349 դր.

Կոմունալ վճարումներ - 16.500 դր.

Բանկային վճարումներ - 70.000 դր.

Ծրագրային ծախսեր – 17.091.684 դր.

- Երևանի Զարգացման կենտրոն: Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները:

  Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, տիկնիկագործության, օտար լեզուների՝ անգլերեն և ռուսերեն, անիմացիայի խմբակները: Կազմակերպվում են նաև մարզման կուրսեր ու դասընթացներ ծնողների համար:

- Ստեփանավանի Ցերեկային կենտրոն: Կենտրոն են այցելում սոց. անապահով, ծնողազուրկ, բռնության ենթարկված երեխաները:

  Կենտրոնում գործում են պարի, նկարչության, թատերական, խմբակները:

- Օգնություն սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց: Կազմակերպվել են սիստեմատիկ այցելություններ, տոնական միջոցառումներ, ինչպես նաև էքսկուրսիաներ Աշտարակի ձորում, Կարպիի ձորում, Երևանի Հաղթանակ զբոսայգում:

- Ֆինանսական աջակցություն Արցախյան պատերազմի ժամանակ զոհված կամ անհետ կորած զինվորների ընտանիքներին:
- Ամսական նպաստի տրամադրում ծնողազուրկ երեխաներին, սահմանափակ կարողություն ունեցող մարդկանց, որբևվարիներին:
- Օգնություն սոց. անապահով ընտանիքներին: Տրամադրվել են ֆինանսական և սննդի օգնություն:
- Բազմազավակ ընտանիքին օգնություն՝ կառուցվել են լրացուցիչ երկու ննջասենյակ, զուգարան, բաղնիք:
- Հումանիտար օգնություն Հոլանդիայի Գլոբալ Էյդ Նեթուորք /Global Aid Network/-ից: Կազմեկերպությունից ստացել ենք գրասենյակային կահույք, հաշմանդամի սայլակներ և սավաններ: Հաշմանդամի սայլակները և սավանները տրվել են սահմանափակ կարողություն ունեցող անձանց և սոց. անապահով ընտանիքներին: Գրասենյակային կահույքը տրամադրվել է Ստեփանավանի, Ուռուտի, Արագածավանի Ցերեկային կենտրոններին: 2021 թ-ի ապրիլին գրասենյակային կահույք կտրամադրվի նաև Ճամբարակի նորաբաց Ցերեկային կենտրոնին:

31.03.2021 թ.